

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

371

ՄԱՆԿԱԿԱՐԺԻ ԳՐԱԴԱՐԱՆ № 9

G-36

ՀԱՅԿԵՑ

ԿՅԱՆՔՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼԸ

ՀԵ ————— 364 —————

ՆՐԱՆ ՄԱՍՆԱԿՑԵԼԸ

—————

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1926 թ.

1 MAR 2010

№ 9 ԱՐԵԿԱՎԱՐԺԻ ԳՐԱԴԱՐԱՆ № 9

Ա. Զ. Յ. Ն. Տ.

37
036

Վ.

ԿՅԱՆՔՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼԸ

364

ՆՐԱՆ ՄԱՍՆԱԿՑԵԼԸ

0880
6



ՊԵՏՈՎԱՆ. ՀՐՈՍՈՐԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1926 թ.

ԳՈՅ ԶԱԿ
113 JUL 2013

45.365

I

Մեր յերկիրը համակված է իր կյանքը վերաշինելու մեջ աշխատանքով։ Այս աշխատանքը բարդ է ու անչափ ծանր։ Բնակչությունը մասնաւաբար ձգտում է զեպի լավագույն կյանք, նոր կարիքներ ու պահանջներ են առաջացել և սուր կերպով զգացվում է այս պահանջների ու նրանց բավարարելու կարելիության մեջ յեղած անհամապատասխանությունը։ Անտարբեր մարդիկ ալժմ շատ չկան։ Ներկա կենցաղի բնորոշ արամագրություններն են—հուզմունք, խռովություն, վորոնումներ, կրքոտ ճառեր, արտասահություններ, հնի և նորի պայքար, ատելություն և հիացմունք։

Կյանքը շարժվել է իր հիմքերից, նոր հիմք է զրվում։ Հոկայական ու քառային շարժման մեջ սաեղծվում է նոր տնտեսություն, սոցիալական նոր հարաբերությունների և նրանց հետ կաված նոր կենցաղի ուղիներ։ Հասարակական ամեն մի աշխատանք, ամեն մի կազմակերպություն պետք է համապատասխանեն այն բանին, ինչով վոր խորապես շահագրգուփած է կյանքը իր

հիմնական պահանջներով։ Մեզ հետաքրքրող հարցը—մանկավարժական գործը յենթակա յեկանքի պահանջներին ու կարիքներին համապատասխանելու նույն որենքին։

Գլխավոր աշխատանքը, վոր իր մեջ պարունակում ե մանկավարժական գործի հիմնական ու դեկավարող գործը ներկա մոմենտում ծրագրերն են, այն ծրագրերը, վոր առողջապահում կը բում են ՊԳԽ-հի (ՂԿԸ) ծրագրեր անունը։ Բանվորական յերկար ժամանակ ե անցել ծրագրերի հրատարակության որից, թեպետ սա գեռ ևս առաջին շրջանն ե։ Նրանց վերամշակման գործում զգալի փորձ ե կատարվել վոչ միայն պրակտիկ աշխատակիցների մոտ և դեկավարող որդաններում, այլ և կյանք մացնելու գործնական կիրառման խնդրում։ Ի՞նչ ե տալիս մեզ այս փորձը։

Ինչպես հայտնի յե, ծրագրերը պիտի վերամշակեն տեղական նյութի վրա։ Տեղական վերամշակումը հիմնական ցուցմունքներից մեկն եր։ Պետգիտիսորհը շատ իրավացի յեր նկատել վոր ծրագրերի վրա աշխատելու յե վոչ թե միայն կենդրոնը, այլ գործի յեն կանչվելու տեղերը, վորոնք գիտեն իրենց պայմանները և այս պայմաններում տարվող աշխատանքի առանձնահատկությունները։

Ամենակարևորը, վոր կարող եր տալ կենդրոնը այն ուղղությունն եր, վորով պիտի ընթանալին վերամշակման աշխատանքները։ Յեվ այդ արվեց, Վերամշակման ուղղությունը բնորոշվում ե այն խիստ կազմակերպությամբ, վոր գոյություն ունի ծրագրերի բովանդակության և մյուս կողմից՝ տեղական պետքերի ու պահանջների, բնական, տնտեսական, կենցաղային պայմանների առանձնահատկությունների մեջ և կախված ե հասարակական աշխատանքի այն ծրագրից (սլանից), վոր նախատեսնվում ե ամեն մի շրջանում։ Ի՞նչպես պետք ե պատկերացնել այս առնչությունը, ի՞նչպես պետք ե տեղական բռնուկթ (կոլորիտ) տալ ծրագրերին։

Այս հարցի միակ պատասխանն ե հենց իրենց թեմաների բովանդակությունը. այն թեմաների, վորոնց վրա աշխատում ե՝ և ուսուցիչը, և՝ աշակերտը, և՝ վերջապես ամբողջ դպրոցն ու դպրոցական սիստեմը։ Թեմաները պիտի մատչելի լինեն յերեխայի մաքին ու աշխատանքին և պիտի ունենան կենսական ու լուրջ նշանակություն այն շրջանում, ուր զըպրոցն ե աշխատում։ Վորպեսզի այս խնդիրը լուծված համարվի, վորպեսզի կատարված աշխատանքի ճշտությունն ստուգվի, պետք ե գործը հասցնել այն աստիճանին, վոր յերբ վերցնենք

ծրագիրը և ուշադրությամբ կարդանք, — կարողանանք ասել. սա վոչ թե ծրագիր ե ընդհանրապես, այլ Սիբիրի, Կուրանի, Սարատովի ծրագիր ե... և այդ վոչ թե նրա համար, վոր վերնագիրն ե այդպես, այլ վորովհետեւ ունի համապատասխան թեմաներ ու տեղական բովանդակություն։ Այսպես հաճախ ցուցունքներ են հանդիպում ՊԳԽ-ի ծրագրերում, վոր պետք ե ուսումնասիրել տեղական բնությունը, նրա հարստությունները, ուժերը և մարդկանց գործունեությունը և այն հասարակական պայմանները, վորոնց մեջ ընթառում և մարդկային աշխատանքը։ Ուսումնասիրել տեղական վայրը իր գլխավոր կողմերով (բնություն, աշխատանք, հասարակություն), նշանակում ե մեծ արժեք տալ տեղական կարիքների ու պետքերի պարզաբանության։

Սակայն ինչու համար ե կյանքի տեղական պայմանների ուսումնասիրությունը, Կարծես թե պարզ ե սրա պատասխանը. վորպեսզի հասկանանք, տարբերենք ու գնահատենք այդ պայմանները։ Այս բոլորը մեծ հնարավորություններ են ստեղծում յերեխայի զարգացման համար։ Սակայն յեթե պատասխանն այսպես ձևակերպենք (սովորել՝ հասկանալու համար) այդ շատ քիչ կը լինի, մինչդեռ ծրագրերի պրոբլեմն այլ բան ել ե ասում. — դպրոցն ուսումնասիրում ե

տեղական պայմանները նաև այն նպատակով, վոր շփվի նրանց հետ, վորպեսզի դպրոցը բավարար չափով մասնակցի տեղական կյանքին, հոգսերին ու պետքերին։ Ծրագրերը կապում են դպրոցը կյանքի հետ՝ դպրոցի մասնակցությունը կյանքում կազմակերպելու նպատակով։

Ի՞նչ դուքս յեկավ սրանից։

Այն՝ վոր ծրագրերի վերամշակման համար անհրաժեշտ այս յերկու պայմաններից — «ուսումնասիրությունն» ու «մասնակցությունը» — մանկավարժական շրջանները կանգ տռան առաջինի վրա, մոռանալով յերկրորդը։

Իսկ ի՞նչ յեղավ սրա հետևանքը։

Այն՝ վոր իր կազմակերպված զարգացման առաջին շրջանում (կազմակերպելու սկիզբը համարելով ծրագրերի հրատարակությունը) մեր դպրոցը դիտում ե, եքսկուրսիաներ ե կատարում, նյութեր ե հավաքում, բերում այդ նյութերը դպրոց, մշակում, շարադրում, պլակատներ ու գիազրամներ ե կազմում. և հետեանքները ցուցադրում դպրոցական ցուցահանդեսներում։ Վար դպրոցին ե հատուկ այս. ինարկե իլյուստրատիվ դպրոցին և վոչ՝ աշխատանքային։ Մենք յերկու տարի սիստեմատիկ աշխատանք ենք տարել տքնել, խճճիկ ենք ու փայփայել իլլուստրատիվ դպրոցը, ոգավելով յերեխանների

թե շատ ակտիվ մասնակցության մեջողներով՝ կյանքը պատկերացնելու, արտահայտելու գործում։

Ի՞արկե գովելի յեր, վոր կյանքը անդրադառնում եր այդտեղ և գոչ թե առաջվա նման պատկերացնում միայն այն, ինչ տպվում եր կյանքի մասին գրքերում, դասագրքերում և բըհստոմատիաներում։ Տարբերություն կա, բայց իրոք այնքան ել խորը չե այս տարբերությունը։ Մեր այժմյան դպրոցում ավելի կյանք ու ակտիվություն կա, ավելի քիչ ե գրքի գերն ու նշանակությունը, բայց և այնպես սկզբունքորեն մենք կանգնած ենք quasi—աշխատանքի^{*)} դպրոցի այն գրքերում, վորոնց վրա կանգնել եր ու կանգնած ե ալժմ նոր դպրոցը։ գերմանական, շվեյցարական, բելգիական, անգլիական, ամերիկական դպրոցը վորոշ չափով տարբերվում ե սրանցից։

Պետք ե ընդունենք, վոր աշխատանքի դըպրոցն այնպես, ինչպես վոր ըմբռնում ենք, մեզ համար անհրաժեշտություն ե. սա այն դպրոցն է, որ կազմակերպում է թե կյանքի ուսումնահրարդարություն Յիվ թե դպրոցի մասնակցությունն այդ կյանքում։

ՊԳԻ.հի (ГУС) ծրագրերի բովանդակությունն ըստ եռթյան վերաբերում ե մինչև ուսուական կենդրունական ուայոնին, ավելի ճիշտ՝

^{*)} «Իբր-թե» աշխատանքի դպրոց։

Մոսկվայի շրջանին. յերևակայեցեք այդ ծրագիրը Սև ծովի Կովկասյան ափերին— Սոչիում, Բաթումում և կայլում, ուր ձմեռ չի լինում։ Ի՞նչպես եք վարվելու այստեղ ձմեռային թեմաների հետ։ Մինչդեռ մենք այս առիթով դժգոհություններ լսել ենք, վոր ծրագրերը հետու յեն մեզանից, իսկ ձմեռային աշխատանքների նյութ պարունակող դպրոցքեր չկան։ Ի՞նչպես վարվել Ռւզբեկստանում, Սիբիրում, Մերձամուրյան շրջանում ևայլն։ Ի՞նչպես հարմարեցնել բոլորովին տարբեր պայմաններում ապրող մեր բազմագան ժողովուրդներին, վորոնք նույնպես ցանկանում են խսկական դպրոց ունենալ, դպրոց, վոր հարմարվել տեղական կյանքից ու պայմաններից բղխող առանձնահատուկ կարիքներին։ Յեզ միթե դպրոցը միայն մի ձեռով ե բավարարելու այս պահանջներին— դպրոցական տետրերում արտահայտել տեղական կյանքը։ Յեզ միմիայն մից։

Այսպես մենք չենք լուծիլ այն հիմնական խնդիրը, վոր անհրաժեշտ ե մեր այժմյան դըպրոցին։ Այս խնդիրը կըկարողանա լուծել միայն կյանքի մեջ մասնակցություն ունեցող դպրոցը։ Սա յե լինելու մեր աշխատանքի հաջորդական եռտապը։ Սակայն չպետք ե նսեմացնել, ապարդյուն կամ զնասակար համարել այն աշխատանքը, վոր կատարել են մեր դպրոցները ծրագրերի

վերաբերմամբ։ Ուրիշ կերպ չեր ել կարող լինել, ինկատի ունենալով մեր միջոցները, ուժերն ու պատրաստականությունը։ Դժբախտություն չե, վոր մենք սկզբում ստացանք իլյուստրատիվ և վոչ թե աշխատանքային ուղիներով, յեթե միայն կանգ չենք առնիլ առաջինի վրա և չենք վորոշի՝ բափականալ նրանով, կատարելագործել այն, փոխանակ կենսական դպրոցի իսկական մեծ ուղին անցնելու։ Այս դեպքում անցյալ յերկու տարին (թերես դեռ հարկադրված լինենք մի յերկու տարի ևս ավելացնել) մենք կը հաշվենք իրեւ աշխատանքի դպրոցի նախապատրաստության շրջան։

Սա մի դժբախտություն չե։ Սակայն իրոք կարող ե դժբախտություն լինել, յեթե դպրոցական աշխատանքի ուսումնական կողմերը վտարեն կենսական խնդիրները. այդ դեպքում արդեն մեր դպրոցը յերբեք չի դառնալ աշխատանքի դպրոց։ Իսկ վոր այս վտարումը փաստ ե և կատարվում ե, մեզ կարող ե համոզել այս բանում կոմպլեքսային սիստեմի վրա կատարվող աշխատանքի բնուկթը։

Ինչպես հայտնի է, ծրագրի մեծագույն դըմքարությունները կայանում են նրանց կոմպլեքսիվ կառուցվածքում։ Յեթե ծրագրերի մշակման գործում առաջնակարգ տեղը տալիս ենք միջա-

վայրի տնտեսական-սոցիալական և կենցաղային կարիքների արտահայտման, յերկրորդ բնորոշ կողմը լինելու յե, անպայման կոպերսականությունը, այսինքն՝ դպրոցում և դպրոցից դուրս վորոշ շրջանում տարվող աշխատանքին վերաբերող պիխավոր ու հերթական թեմայի մշակման համար զանազան նյութերի ու կրթական միջոցների միացումը։

Թե ինչ նշանակություն ունի թեմայի ընտրությունն ու ինչով ե պայմանավորված այդ ընտրությունը, մենք արդեն խոսել ենք. գլխավորն այն ե, վոր թեման լինի ուեալ, կենսական, բղիսի դպրոցը շրջապատող միջավայրի կարիքներից և համապատասխանի յերեխաների ուժերին ու ինտերեսներին։

Նյութերը (նաև նրանց հաջորդական կարգը) ընտրելու համար մենք հանձնարարում ենք հետևելու միջոցը։

1. Պատասխանել՝ ինչ ե ներկայացնում այն շրջանը (ուայոն), ուր աշխատում ե դպրոցը, և ինչ աշխատանք պետք ե կատարել այդ շրջանում։

2. Ի՞նչպես ե անցնում յերեխաների կյանքն այս շրջանում և ինչ պետք ե անել՝ նրա (յերեխանքի) բարելավման համար։

3. Կազմել այն գործերի ցանկը, ուր դըմքարոցը կարող ե վորոշ մասնակցություն ունենալ,

գործեր, վորոնք վերաբերում են շրջապատող հասարակության (քաղաք, գյուղ, գործարան), ընտանիքին և մանուկ ընակչությանը:

4. Այս «գործերը» բաշխել ըստ տարվա ընթացքում կազմվելու ժամանակի և համաձայն դպրոցական խմբերի՝ ըստ տարիների:

5. Վորոշել՝ ինչով են զինվելու յերեխաները կազմակերպված ու զիտակցաբար նվաճելու համար այս գործերը, այսինքն՝ ինչ ունակություններ ու զիտելիքներ են անհրաժեշտ յերեխաներին այս բանի համար:

6. Ծրագրի յուրաքանչյուր թեմային կապել յերեխաներին մատչելի այս կամ այն կենսական խնդրի (գործի) գործարանական կիրառումը:

Այս տեսակետից ինչ են նշանակում մշակել թեման: Այդ նշանակում են հասցնել գործնական փախճանին, սեալ գործով սեփական ունակությունների ու զիտելիքների ստուգման: Կոմպլեքսային պրոբլեմի այսպիսի դրությունը կապում են այն շրջապատի կյանքի հետ, տալով այդ կապին գործոն բնույթ ու հասարակական ուղղություն, իսկ թեմայի մշակումը դարձնելով պարզ ու ընական:

Իսկ ինչ են ստացվում գործնականում: Բնդինանրապես կարելի յէ հաստատել, վոր կոմպլեքսների մշակման ու կիրառման գործում նկատ-

վում են մեծ արհեստականություն և կաշկանդում: Գերակշռում են ձևական՝ վերաբերմունք դեպի ծրագրերը: Ճկունության ու կենդանության փոխարեն մանկավարժական աշխատանքում մենք տեսնում ենք ծրագրի բոլոր կետերին սարկորեն հետևելու ցանկություն, վախ նրա ձևակերպումներից շեղվելու, մանրամասն ու հոգատար մշակում այսպես կոչված «սլունյակների» (վորոնց թիվը հասցնում են 2±ի), և այս բոլորը չափազանց ծանրացնում ու բարդացնում են ծրագրերի աշխատանքը: Առհասարակ պետք են ասել, վոր ծրագիրը դարձել են վոչ թե սկզբունք, այլ կուռք, և նրա տառացի գործադրությունը չքացնում են այն լրջությունը, վոր դրվագ եր ծրագրի հիմքում:

Կրկնվում են նույն պատկերը, ինչ վոր տեսնում ելինք ծրագիրը կյանքի հետ կապելու փորձերում: Ինչպես վոր այնտեղ ստեղծվում եր ելլուստաբատիվ կապ, այնպես ել այստեղ ուսումնական կոմպլեքսները բոլորովին մթագնել են նրանց կենսական, ավելի ճիշտ՝ առորյա, պրակտիկ նշանակությունը:

Ինչից առաջացավ այս:


Մենք կարծում ենք՝ այս բանը կարող եր առաջանալ և նրանից, վոր հին սովորության համաձայն ծրագիրը դպրոցի ներքին գործ են համարվել, նրա

ուսումսական աշխատանքի գործ և դժվար ե
մարսվում այն միտքը, վոր (Մ. Պեստրակի հաջող
ձևակերպման համաձայն) դպրոցի ծրագիրը կարող
է դառնալ կենսական ուղեցույց ուսուցչի և
դպրոցի համար, վերջինիս հասարակական
աշխատանքների պլանը: Կարող եր առաջանալ և
այն բանից, վոր բառացի կատարելն ավելի հեշտ
է, քան անձամբ աշխատելը, նաև այն բանից,
վոր ծրագրերին ուղեկցող բացատրությունների
հեղինակները չափազանցության հասցըին «ու-
սումնասիրել» բառը և քիչ ուշ դարձրին այն
բանին, թե ինչպես պետք է տեղերում աշխատեն
ծրագրերի վրա:

Պետք եր այնքան պարզ կերպով շարադրել
բովանդակությունը (տեքստը), վոր յերեխանե-
րին անգամ միանգամայն հասկանալի լիներ: Բատ
յերեսութին պետք է դեռ ևս աշխատել ծրագրերի
վրա, ոգտվելով տեղերի թե բանավոր (զրուց-
ներ պրակտիկ աշխատողների հետ) և թե զրա-
վոր (նյութեր, հողվածներ, հաշվետվություններ)
լայն վորձից:

Սկզբում մենք հիշեցինք պրոբլեմների հըս-
կալական թափը, վորոնց վրա լարված կերպով
աշխատում ե մեր արդի կանքը: Բայց քիչ
ե ասել՝ թափը այդ պրոբլեմների խորությունն
ու բացառիկ դրությունն այնքան նշանակալի յե-

վոր սոցիալական աշխատանքի վորեւ բաժին
անկարող ե մի կողմ քաշվել, իր մասնակի գործը
տանելու նպատակով: Այսպես ել դպրոցը. նա
պետք ե ապրի. հուզվի ու հաղթահարի այն
հիմնական խնդիրները, վորոնք կանգնած չեն
այժման նոր վերաշնորդության ա-
ռաջ: Հասարակական աշխատանքի տեսակները
պիտի ղեկավարի դպրոցի ամեն մի քայլը,—ուղ-
ղությունները, մեթոդները, ծրագրերն ու կազ-
մակերպությունը: Դպրոցը պիտի ձգտի գրավել
իր տեղը կյանքում:



17

II

Հասարակական ինչ տարրերի հետ շփման մեջ մանկական հասարակության հետ Յերեխայի անհատակցության ընթացքում՝ իր հիմնական նպատակին համնելու, հասարակական կյանքին իր ուժերով, միջոցներով ու կազմակերպությամբ մասնակցելու համար։

1. Դպրոցը գործ ունի անհատ յերեխայի հետ և հաղորդում է յերեխայի համար կենսական նշանակություն ունեցող ունակություններ ու գիտելիքներ։ Ամենազիստը ունակությունն երմանալ աշխատել և իր գիտելիքները կիրառել կենսական պարզ խնդիրների իրականացման գործում, հոգալ իր առողջության մասին, աշխատել ֆիզիքապես և մտավորապես, կազմել իր աշխատանքների ծրագիրը և գործնականում ստուգել այն։ Գլխավոր գիտելիքն ե—հասկանալ այն հիմնական նպատակները, վոր առաջադրում ե ներկա կյանքը և ըմբռնել ու տարրերել այն միջոցները, վորոնք տանում են դեպի այդ նպատակների իրականացումը։ Յերեխան պիտի իմանա աշխատել ուրիշների հետ միասին։

2. Դպրոցը պատում է պար շփման մեջ մանկական հասարակության հետ։ Յերեխայի անհատական կարողությունները ձգտում են հասարակական նպատակների, ուստի և դպրոցը կազմակերպում է մանկական հասարակություն կամ նրապատում է նրա կազմակերպմանը։ Մեծ նրաշանակություն ունեն մանավանդ մանկական գործնական կազմակերպությունները, այսինքն՝ յերեխաների միացումը արտագրական, գյուղատնտեսական, կոոպերատիվ խնդիրների շուրջը, վորոնք պետք է ծածկեն ամբողջ յերկիրը։ Այս բանը, ինձի այլոց, մեծ կայունություն կըտա մանկական խնդիրը հասարակական-քաղաքական համախմբման։ Դպրոցը պետք է կարողանա ընտրել այնպիսի «գործեր», վորոնք հասարակական արժեքով հանդերձ, մատչելի և պիտանի լինին մանուկ ընակչության կազմակերպության համար։ Մանկական մասսայական շարժման նախաձեռնությունը յերեխաների մեջ դպրոցը պետք է խրախուսի։

3. Դպրոցը շփում է անհատ ընտանիքի հետ։ Մենք պետք են հաշվի առնենք ուժերի ու միջոցների այն նշանակալի քանակը, վոր ծախսում ե ընտանիքը իր յերեխաների դաստիարակության վրա։ Յեթե մենք դպրոցի առաջ լուրջ կերպով գնում ենք նրա հասարակական դաստիարակչական խնդիրները և այս բանի համար առանձնա-

հատուկ միջավայր ենք կազմակերպում, չպետք է մոռանանք նաև այն, վոր յուրաքանչյուր ընտանիք ունի իր դաստիարակչական ծրագիրը, վոր շատ հաճախ գնում ե այլ ուղղությամբ, քան դպրոցի աշխատանքները։ Դպրոցի առաջնակարգ խնդիրն ե—չեզոքացնել ընտանիքը յերեխաների դաստիարակության գործում, սակայն այս՝ անիրազործելի յե։ Յերկրորդ նպատակն ե—ներգործել ընտանիքի վրա, վորպեսզի վերջինս, շխանգարի դպրոցին իր անելիքի մեջ և ընդհակառակը՝ աջակցի նրան։

4. Առանձին ընտանիքների հետ տարվող աշխատանքը կարող ե արդյունավետ լինել միայն վորոշ պայմաններում, կոոպերացնելով դպրոցի աշխատանքների շուրջը ընտանիքների վորոշ խրմբեր։

Այս միացնող մոմենտների շարքում առաջին տեղը կարելի յե տալ յերեխայի կանոնավոր ռեժիմին ընտանիքում՝ դպրոցի հսկողության ներքո։ Փորձը ցուց ե տալիս, վոր ընտանիքները սիրավ են ընդառաջ գնում դպրոցի գործնական միջամբ ըստության ընտանիքի կյանքի պայմաններում։ Այս գիտողությունը ճիշտ ե թե քաղաքի և թե դյուղի ընտանիքների վերաբերմամբ։ Ընտանիքը շահագրգուված ե, վորպեսզի շատ ժամանակ ու միջոցներ չծախսի յերեխաների վրա, վոր շատ

հաճախ արգյունք ե անկանոն դասավորվող կյանքի և մեծ մասամբ պայմանավորված ե յերեխաների խնդրով։ Ընտանիքների կոոպերացումը փոխադարձ ոգնության, կոնսուլտացիայի, մանկավարժական փորձերի ու միջոցների ստուգման սկիզբն ե և վերջիվերջո ավելի առողջ պայմաններ ե ստեղծում յերեխաների ընտանեկան կյանքում։

Նման մանկավարժական կոոպերացիայի անրացման նպաստող յերկրորդ միջոցն ե կաորեղենի, կոշիկների, մթերքների ընդհանուր գնումներն ընտանիքի հետ, հագուստի ձեելն ու կարելը, դրապարոցի և ընտանիքի համար թղթի, գրքերի և այլ պիտույքների միասին ձեռք բերելը։

Ընտանեկան խմբերը միաձուլող յերրորդ մոմենտն ե—կազմակերպել կուլտուրական ակումբներ, միասին աշխատել, դասախոսություններ, զեկուցումներ, համերգներ և ընթերցանություններ, կազմակերպել ակումբի անդամների համար։

Հիշալ յերեք մոմենտներում ել դպրոցը կազմակերպչական լայն մասնակցություն ե ունենալու։ Այստեղ նա կենցագալին գեր ե ստանձնելու։ Միջավայրից իր կենցաղը հոգատարությամբ պաշտպանող նին ընտանիքը ընականաբար դանդաղեցնելու յե նոր ծրագրերի կենսագործումը՝ յերեխաների դաստիարակությունը իր անձնական գործը համարելով։

5. Յեթե իրոք ընտանիքի հետ դպրոցի տարած աշխատանքը հետապնդի ընտանեկան ռեժիմը հոգուտ լերեխաների փոփոխելու խնդիրը, յեթե այս գործում դպրոցն զգալի հաջողությունների հասնի, իր գործի կենսական կազմակերպման մեջ նա խոշոր քայլ արած կըլինի։ Բայց ըլրա վրա կանգ չի առնելու. նա ընտանեկան-«ծընողական» դպրոց չի դառնալու, այլ պետք է ձգտի հասարակական դպրոց դառնալու։

Արդարև, յեթե դպրոցը նպատակ է դնում մասնակցել շրջապատի կյանքին, նա պիտի ընդհանուր աշխատանք տանի այն հիմնարկների հետ, վորոնք կազմակերպում են տվյալ միջավայրը և սերտ կերպով շաղկապիում են դպրոցի առորյա պահանջների, դժվարությունների ու նվաճումների հետ։ Ընդհանուր աշխատանքի գործնական ու ձիշտ մերձեցում ունենալ գործարկումի, գյուղիորհրդի բնակարանալին ընկերությունների հետ այնքան ել հեշտ չե և պահանջում է փորոշ ժամանակ ու հմտություն։ Բայց և այնպես սա՝ ժամանակակից դպրոցի կարևորագույն խնդիրներից մեկն ե։

Այսպիսով առաջին հերթին պետք է ստեղծել ընդհանուր կուլտուրական աշխատանք տեղական հասարակական հիմնարկների հետ, վորոնք կազմակերպում են դպրոցին շրջապատող

միջավայրը։ Կարելի լե խոսել գործնական շինարարության բոլոր կողմերն ընդգրկող պրակտիկ ծրագրերի մասին։ Գործնականում մեծ դժվարություններն են հանդիպում այս բանում. ինչքան մեզ հաջողվել է նկատել, այդ դժվարություններն առաջանում են վոչ թե մեր անկարողությունից, պակաս հետաքրքրությունից կամ տեսական պատրաստականության մակարդակից, այլ միջավայրի տվյալ պայմաններում մեր անելիքը չհասկանալուց։ Հաճախ լսում ենք. «Տարիներ շարունակ աշխատում եմ, միշտ վորոնել եմ, սակայն չգիտեմ. ի՞նչ ե անելու դպրոցը քաղաքում, գործարանում...»։ Ավելի պարզ են թվում գյուղի աշխատանքի հետ կապված խընդիրները, սակայն սա ել ճիշտ չե. պրակտիկ աշխատավորները շեշտում են գյուղի մոտեցման դժվարությունները և հասարակական աշխատավորների պլիսավոր մասը խմբվում են քաղաքներում ու գործարանային շրջաններում։ Յեզ այսպիսով այս ամենապարզ ու ամենակարևոր խնդիրը՝ ինչպես վարվել տվյալ պայմաններում և որեկտիվ կերպով քիչ թե շատ անսխալ ուղին, գտնել, դառնում է միաժամանակ և ամենադժվար խնդիրը։ Դպրոցը մենակ չի կարող լուծել այս խնդիրը։ Հաջող աշխատանքը ուժերի հսկայական լարումն ե պահանջում. կըթողնես,

ամեն ինչ կըքայքայվի. մեր կազմակերպությունները լավ չեն միացվում սոցիալական շաղախով։

Սակայն յեթե գործն այնպես դնենք, վորմի կուլտուրական աշխատանք անդրադառնա տնտեսական կազմակերպության վրա, այսինքն՝ ըստ իր ուղղության նպատակահարմար լինի և ըստ կիրառման գործնական բնույթ կրի, սոցիալական շաղախն այդ դեպքում կըսկսի հետզհետե ուժեղ գործել։ Ընդհանուր ծրագրում դպրոցն իր վրա ե վերցնում յերեխաների հասարակական խնամքի մեծագույն մասը, անկախ այն հանգամանքից՝ դպրոց հաճախում են նրանք թե վոչ։ Այս նպատակի համար ընտանեկան նույնիսկ ուժեղ կոռպերատիվի ուժերն անբավարար են, մանավանդ նա չի ել շահագոված հասարակական լայն աշխատանքով։ յուրայինների մասին ըստ հարկի հոգալը քիչ բան չե նրա համար։

6. Մինչև ալժմ, խոսելով այն սոցիալական ուժերի մասին, վորոնց հետ դպրոցը գործնական կապ ե սահմանում, մենք ինկատի յենք ունեցել դպրոցն անմիջապես շրջապատող միջավայրն ու նրան կազմակերպող որգանները։

Պետք ե վորոշակի պատկերացնել, վոր միայն տեղական միջավայրն անկարող կըլինի մշակել որեկտիվ ու ոեալ աշխատանքի խսկական

ուղղությունը և տալ այն հատուկ ոգնությունը, վոր վեր ե տեղական սահմանափակ կարողություններով ոժտված վորեւ կազմակերպության ուժերից։ Ուրեմն դպրոցը պետք ե լուրջ կերպով հետաքրքրվի նաև այն լայն հասարակության ընդգարձակ խավերն ընդգրկող որգաններով, հիմնարկներով ու միություններով, վորոնք կարող են ոգնել թե աշխատանքի ուղղությունն ընտրելում, թե գործնական խորհուրդներով հրահանգներով, կատարածի ստուգմամբ և այլն. այդպիսիներն են՝ գավառական ու նահանգական մասշտաբով գործող որգանները։ Անցնում ե մեծ մասամբ պատահական բնույթ կրող անհատական փորձերի, ուժերից վեր ծանրաբեռնումների, եներգիայի անհաշիվ վատնումի, սուբեկտիվ ծրագրների ու կամայական գնահատանքների ժամանակամիջոցը։ Անցնում ե, բայց չի անցնի բոլորովին։ Վերոհիշյալ նկատառումներն ի հարկե չեն ժխառում այն բոլորը, ինչ վոր կարեվոր է, ինչ վոր կարելի յե քաղել նոր խնդիրների առաջադրություններից և նոր ուղիներ գծելու ինքնուրոյն փորձերից։

Սակայն թող ինքնագործումնեությունն ավելի հաշվի առնի կյանքը և սկզբունք չդարձնի Ամերիկայի գյուտը։ Ուրեմն պետք ե հանգել այն մտքին, վոր դպրոցը սովորի միասին աշխատեր

Կառավարության, խորհրդ. որդանների, կոռպերատիվ հիմնարկների, բժշկի, գյուղատնտես ինժեների հետ ևազն։ Այս բանը կոզմի նրան ավելի վստահ աշխատելու և ավելի լայն հայացքով ընդգրկելու իր գործը։

Կարող ե թվալ, վոր դպրոցական աշխատանքի մեր մասնանշած շրջանները շատ քիչ առնչություն ունեն ուսումնական թեմաների մշակման, դասավանդման կոմպլեքսային սիստեմի և այն նյութի հետ, վոր յենթակա յե մշակման, մի խոսքով այս բոլորը շեղում են դպրոցը իր հիմնական մանկավարժական խնդիրներից։ Մենք այդ կարծիքին չենք։ Մենք կարծում ենք, վոր ՊԳԽ-ի ծրագրերի կենսական բնույթը չի կարող իրականանալ միմիայն դպրոցական կազմակերպության ուժերով։ Ծրագրերը վոչ թե միայն խոսում են նոր նյութի, նոր կոմպլեքսային դասավորության մասին։ Եթանիք այլ դպրոցական կազմակերպության պահանջ են դնում։ Նրանք պահանջում են մանկավարժական աշխատանքին մասնակից դարձնել բնակչության լայն խավերը, վորոնք կառուցում են կյանքը և այդպիսով այլ միջավայր, այլ նյութական պայմաններ, այլ սոցիալական հարաբերություններ, այլ կենցաղ են ստեղծում յերեխաների կյանքի համար։ Պետք ե հետզետե սովորենք ավելի լայն

հայացք ունենալ մանկավարժական գործի վերաբերմանը։ մանկավարժական աշխատանքը մասսաների մեջ անենից շատ տարածված գործերից մեկն ե, դժվար է նրան առանձնացնել և առանձնահատուկ բնույթ տալ նրան։ Սա մասսայական աշխատանք է, և մեր միակ հիմնական նպատակն է կազմակերպել մասսայական ջանքերը՝ յերեխաներին, դեռահամերին, յերիտասարդությանը դաստիարակելու գործում։

Այն մտքով դաստիարակել, ինչպես մենք ենք հասկանում, նշանակում ե, տվյալ միջավայրում կազմակերպել նպաստավոր պայմաններ յերեխաների համար, վորոնք նույն միջավայրից են վերցնում իրենց աշխատանքի մոտիվներն ու նյութերը։ Զի կարելի խոսել միայն հատուկ դպրոցական շենքերում արտահայտվող մանկավարժական պրոցեսների մասին։ ավելի ճիշտ կը լիներ վորոշել միջավայրի—գյուղի, գործարանային թաղամասի, քաղաքի, յերկրի—մանկավարժական պրոցես, այսինքն այն, ինչ յենթակա յե մեր ուսումնասիրության և կազմակերպության՝ ըստ մեր միջոցների և ուժերի։ Նման մանկավարժական կազմակերպության հիմքը մենք կարող ենք այժմ ել դնել։ Այս ուղղությամբ կրնկրետ քավերը մեր այժման ծրագրի կետերն են կազմելու։ Այստեղից կարելի չե անցնել և

կսմպլեքսալին սիստեմին և կոմպլեքսալին թեմաների մշակման։ Ի՞նչ կընշանակի նյութերի այս ուղղությամբ մշակելը։ Մեր կարծիքով նյութը մշակել, նշանակում եւ ձեռք բերել այնպիսի դրություն, վոր հնարավոր լինի փոփխություն մացնել յերեխաների վարքի, ուժիմի, աշխատանքի մեջ։ Այս բանին կարելի լե համել համապատասխան կերպով փոփխելով այն միջավայրը, ուր ապրում եւ յերեխան։ Իսկ միջավայրի փոփխությունը հնարավոր եւ միայն մասնակցությամբ այն կենդանի ուժերի՝ յերեխա թե չափահաս, վորոնք ստեղծում են այդ ուժերի միջավայրը։ Այսպիսով այդ ուժերի մասնակցությունը դպրոցի աշխատանքներում անխուսափելի լի։

Մշակել «Առողջություն» թեման նշանակում եւ իմանալ, հօգալ այդ առողջության մասին, ձեռք բերել համապատասխան ունակություններ ու գիտելիքներ։ Մշակել մի կամ միքանի թեմաներ աշխատանքի մասին, նշանակում եւ իմանալ աշխատել, իմանալ սեփական աշխատանքը կազմակերպել և ուրիշներին աշխատակցել։ Ամեն մի թեմա ուղղակի կամ անմիջական կերպով կամ վորոշ նախապատրաստության համար անհրաժեշտ ընդմիջումից հետո կոնվենտ կերպով արտահայտվում եւ յերեխայի կյանքի այն կողմի փոփխության մեջ, վորին վերաբերում եր տվյալ թեման։

Յերեխաների համար՝ նրա սովորելը մեծ չափով իմաստավորվում եւ սրանով։

Յես սովորում եմ—և ահա ինձ համար ապրելն ավելի լավ եւ ու հետաքրքրական։ յես սովորում եմ և իրենց գործով զբաղված չափահաների վերաբերմունքը, վորոնց հետ յես կրծանոթանամ «յերբ մեծանամ», փոխվում եւ ինձ հաշվի յեն առնում։ ինձ «բանի տեղ են դնում»։ յես սովորում եմ և ձեռք եմ բերում ընկերներ, վորոնց հետ կառուցվում եւ կյանքի նոր ձևեր, յես սովորում եմ և միանում իմ կյանքի մեծ հոսանքին, վոր արդեն ճանաչել եմ և սկսում եմ հասկանալ։ յես սովորում եմ և քանի շատ եմ սովորում, այնքան ավելի յե գործը յեռում իմ ձեռքում, —ահա այն տրամադրությունները, վոր համակելու յեն մեր պատանեկությանը նոր դպրոցի և նրա ծրագրի վերաբերմամբ։ Այս կարելիությունների համար չի կարելի անտարբեր մնալ։

III

Կարելի՞ յէ հեշտությամբ տիրապետել նման ծրագրին. սակայն կարևորը վոչ թէ հեշտությունն ե կամ արագությունը, այլ այդ ծրագրով հաստատ մոտեցումը կամնքին։ Պետք ե շատ մեծ զգուշությամբ մոտենալ այն բոլոր հրաշքներին, վորոնք իբր թէ վոտից գլուխ վերափոխում են ուսուցչին, աշակերտին, դպրոցն ու ընակչությունը։ Հրաշքներ տեղի չեն ունենում և կարիք ել չկա։ Մեր ծրագրերից վոչ մի հրաշք չենք ըսպասում։ Մեր ծրագրերն իհարկե մեծ և լուրջ կարեռություն ունեն և դատարկ ձեռքերով չի կարելի մոտենալ այդ գործին։ Վերևը մենք մատնանշեցինք այն կապերը, վոր սահմանում ե դրաբրոցը յերեխաների, ընտանիքի և հասարակական կազմակերպությունների ու հիմնարկների հետ իր ծրագիրը կենսագործելու, իր թեմաները—գործերն իրապես մշակելու համար։ Այդ ցուցմունքներն ունին այն նշանակությունը, վոր աշխատանքի դպրոցի ծրագիրն անխուսափելիորեն կառուցելու յէ իր կազմակերպության բարդ մեխանիզմը՝ իր կենսական աշխատանքն իրագործելու

համար։ Նրանց հիմնավորումն ե այն փաստը, վոր մանկավարժական պրոցեսը, յերեխաների ձեակերպումն ու դաստիարակությունն ամբողջովին դրաբրոցով չի սահմանափակվում, վոր մենք շեշտելու յենք դաստիարակության հիմնական գործոնները՝ բնությունը, անտեսությունը (եկոնոմիկա), կենցաղը, սոցիալական կազմակերպությունը, վոր մեր գործն ե. աշխատել, վորպեսզի այդ գործոնները հետզհետե ավելի նպաստավոր դառնան մանկան միջավայրի համար։ Աշխատել, իհարկե խիստ ե ասված. տվելի ճիշտ կրթիներ ասել՝ մեր գործն ե մեր լուսան մտցնել այս գործոնները փոփոխելում, ընդունելով այն իբրև մանկավարժական գործոններ։ Ժամանակակից ոռուսական մանկավարժության ինդիքն ե—սոցիալական մանկավարժության նոր շրջանները մշակել (գուցե կարենը լինի գործածել տնտեսական, կենցաղային մանկավարժության տերմինները)։ սուբյեկտիվ, փորձնական (եմպիրիկ) մանկավարժություննից, ուսուցչի անձնավորության հետ կապված առանձին հաջողություններից ու անհաջողություններից մենք անցնում ենք զեպի որէեկտիվ մանկավարժությունը, վոր մեր հաջողություններն ու անհաջողությունները փնտռում ե կյանքի միջավայրի յերեսութների մեջ, վորին յենթակա յեն և վորի աղգեցությունը կրում են իրենց վրա։

Ուսուցիչը գանդատվում է. «Վոչինչ չի հա-
ջողվում անել. յերեխաները չեն աշխատում, կար-
գապահություն չկա, կովում են իրար հետ, ան-
հանգիստ են, մեկ զալիս են դպրոց, մեկ կորչում
են առանց վորեե պատճառի: Զգիտեմ ինչ անել:
Քստ յերեսութիւն չեմ կարող, անընդունակ եմ:
Ավելի ազնվություն կըլինի հեռանալ» ևացնւ
Փորձենք գտնել պառակտումների պատճառը: Ու-
սուցիչը նույնն է, ինչ վոր առաջ. յերբ նրա գոր-
ծը հաջող եր գնում: Իսկ զյուղը, այ, նա փոխ-
վել է. իր կենցաղի սուր փուլն ե (Փազը) նա
ապրում—վերափոխվում է: Ի՞նչպես կարող են
հանգիստ մնալ յերեխաները, յերբ նրանց յետե-
փում կանգնած են հայրը, մայրը, յեղբայրը ի-
րենց մանր-մունք հողամասերից ծանր հոգառվ բեռ-
նափորքած: Յեվ ուսուցիչը լավ կանի: յեթե ուշ
դարձնի հողաբաժանմանը, իբրև դաստիարակու-
թյան վորոշ գործոնի, վոր ազդում է յերեխաների
վարքի վրա, և ձգտի ոգնել զյուղին հողաբաժան-
ման խնդիրը հարթելու գործում: Իսկ նման դեպ-
քերը շատ են դպրոցի կյանքում: Քիչ ե ասելը՝
շատ են. դրանք յերեխաներին դաստիարակող
դիմավոր ֆաստերն են: Սոցիալական կյանքի բո-
լոր յերեսութները կապված են նյութական մի-
ջոցների, ուժերի, ժամանակի ծախոր հետ: Այս
ժախսման մեջ կազմակերպությունն և սիստեմ մը-

յնել, տվյալ պարմաններում նպատակահարմար
ուղղության ստեղծելը նշանակալի չափով կը-
թեթևացնեն սոցիալական աշխատանքը: Ահա թե
ինչու աշխատանքի ծրագրով ընթացող դպրոցը
շահագրգուված է սոցիալական յերևուցիքների լու-
սաբանության, նրանց ուսումնասիրության, և
պլանաշափ ծավալման մեջ: Դպրոցը պիտի հիշի,
վոր միջավայրի կյանքը—յերեխայի կյանքի վրա
ազգող գործոնների կոմպլեքս է:

Փորձենք մի փոքր հաշիվ անել. յեթե ընդու-
նենք վոր մեր յերեխաների ու պատանիների ընդ-
հանուր քանակը մոտ 40 միլիոն է, վորոնց կա-
րիքները հոգալու յե բնակչությունը, նաև այն,
վոր մի յերեխայի կամ պատանու դաստիարակու-
թյունը (մնունդ, հագուստ, բնակարան, հիվան-
դություն, խնամք, ուսումն) ընտանիքի վրա նըս-
տում է միջին հաշվով տարեկան 75 ոութիւնի, կրա-
տանանք տարեկան ծախք յերեք միլիարդ ոութ.
այս յերեք միլիարդը ըստ եռության ժողովրդական
կրթութան և դաստիարակության վրա ծախսվող
ուսումական ընտանեկան բյուջեն է: Մեծ գումար
է, վոր արժեքը հաշվի առնել: Մյուս կողմից պե-
տությունն ևս իր կենցընական և տեղական բյու-
ջեով աճող սերնդի նույն մասսայի վրա ծախ-
սում է մոտ 300 միլիոն. այսպիսով պետական և
ընտանեկան բյուջեների վոխճարերությունն է

1:10. Պետությունն անկարող ե վերցնել իր ուսերին բոլոր ծախսերը (վոր չնայած 3 միլիարդ ե, բայց համեմատաբար շատ ու շատ քիչ ե դեռ ևս): Ուրեմն ի՞նչ ե մնում անել:

Կարծում ենք ճիշտ կրթիներ հետեւալ տեսակետը. 300 միլիոնի միջոցով կազմակերպել յերեք միլիարդի դաստիարակչական գործադրությունը. Լուսժողկոմատի և նրա տեղական որգանների բյուջեն՝ յերեխաների դաստիարակության ընդհանուր նպատակի համար ընտանեկան բջիջներում տարվող մասսայական աշխատանքը կազմակերպող բյուջեն ե:

Ահա թե ինչո՞ւ անհրաժեշտ ե ուսումնիրել յերեխաների վրա գործադրվող մասսայական ծախսումների ձևերը, դաստիարակության միջոցներն ու սիստեմները, կազմակերպել նրանց ընտանիքները, կոռպերացնել, ընտանիքի հետ գործնական կապ սահմանել, սովորել կազմակերպված ու անկազմակերպ բնակչության հետ աշխատել, մի խոսքով՝ հասարակական — աշխատանքալին դպրոցի աշխատանքի մեթոդները առորյակում գործադրել: Սա անխուսափելի ու նպատակահարմար ե, սակայն և միաժամանակ հարցի նման գրությունը վորոշ չափով փոփոխում ե մեր կազմակերպչական, մեթոդական և ծրագրային պրանուր՝ «ուսումնասիրության» հետ միաժամանակ և հոգուտ «մասնակցության»:

Դպրոցական կազմակերպության մի առանձնահատկությունը կարելի յէ շեշտել այստեղ. մյուս բոլոր հասարակական հիմնարկներից ավելի յէ նա շփում լուրաքանչյուր առանձին ընտանիքի, հեետևապես և լուրաքանչյուր առանձին տնտեսական միավորի հետ: Հասարակական աշխատանքի ուրիշ վոչ մի ճյուղ բնակչության գգալի շրջանների հետ մշտական, համարյա ամենորյա շփման այդպիսի կարելիություններ չունի, ինչպես դպրոցը: Այս հնարավորությունները պետք գնահատել: Իզուր չե, վոր ամբողջ առաջին, մասսամբ և յերկրորդ տարին ըստ ծրագրերի հատկացվում ե յերեխացին անմիջապես շրջապատող կյանքի տված նյութերի մշակմանը:

Ահա այն միքանի տեսական նկատառումները, վորոնցով կարելի յէ հիմնավորել դպրոցի հասարակական աշխատանքը:

Դպրոցական ծրագրերի կիրառման այս ուղղությունը ի՞նչ հեռանկարներ ե ներկայացնում:

Մատնանշենք միքանիսը:

Դպրոցական աշխատանքի կարևոր առանձնահատկությունը ներկայացնող մշտական շփումը կյանքի հետ՝ լուրջ նեցուկ ե դարձնում այս աշխատանքը մի շարք կուտուրական մասսայա. կան ձեռնարկություններում.

1. Գյուղատնտեսություն և կոռպերացիա:

Յերկիրն անցնում է հողամշակման նոր յեղանակների, նոր տեխնիքացի և մթերքների մըշակման ու սպառման կոոպերատիվ կազմակերպման:

Այս պրոցեսը կարող է և դանդաղել, և արագանալ: Նա դանդաղում է շնորհիվ անսովորության, ին ունակությունների, միջոցների բացակայության, մանավանդ անտեսության արգունքները հաշվի առնելու անկարողության: Եթևտենափի աշխատանքի դեպքում առհասարակ հաշվի չի առնվում աշխատող (բանվորական) սուժը: Բայ 1923 թ. տվյալների գյուղատնտեսության մեջ միջին հաշվով բանվորական ուշի մոտ 22 տոկոսը չի ողտագործած: Ճիշտ հաշվառումը ցուց է տալիս կաթնատնտեսության վընասը, ներկա դրությամբ ձիեր ու հավեր պահելու ֆասատվությունը ևայլն: Մենք կարծում ենք վոր ուսման չորրորդ տարում թեկուզ տարրական հաշվետարություն մացնելը գյուղացու տնտեսության և նրա կոոպերացման հսկայական ոգուտ կրտար, մանավանդ յեթե դպրոցը վարժեցներ յերեխաներին իրենց սեփական տնտեսության հաշվետարության մեջ: Յեթե մենք մեղ պատկերացնենք վորև գավառում նման հաշվետարական կուտուրացի կիրառումը բոլոր դըպրոցների կողմից, և յեթե դպրոցը տարիների ընթացքում աշխատի այս ուղղությամբ, նա ինքը

կրդառնա վորոշ տեսակի հաշվառման բյուրո և, անկասկած, անտեսության տերերին կրհարկադրի ոգուվել իր ձեռքերություններից: Յեկ արդարև գյուղում բոլոր ձեռնարկություններին պետք ե մոտենալ մատիտը, թուղթն ու թվերը ձեռքին:

Մենք շատ հաճախ վրդովմունքով ենք խոսում ունակությունների ու նրանց ձեռք բերելու մասին: Պետք է մտածել և այն մասին, վոր հաճախ կիրառվեն այդ ունակությունները: Հաշվետարության ունակությունը, վորի մասին խոսում ենք այստեղ, շատ հարմար է գործնականում կիրառել: Բայց հաշվետարությունը—դըպրոցի ընդհանուր մոտեցումն ե գյուղատնտեսության: Դպրոցը կարող է մեծ չափով ոժանդակել նաև գյուղատնտեսական կուտուրաների տարածման մեջ:

2. Փորձնական կայանի (Կալուգայի նահանգում) աշխատանքների շրջանում կա կարտոֆել-քերելու մի մեծ գործարան (զավոդ), վորը պատկանում է տեղական գյուղատնտեսական ընկերություններից մեկին: Նրա գործունեության վողջ հաջողությունը կախված է նրանից, թե ինչ արագությամբ տեղացի գյուղացությունը կուտեղացնի ընդհանրապես կարտոֆելի և մասնավորապես այն տեսակների կուտուրան, վորոնք պարունակում են ոսլալի (կրախմալ) ա-

ռավելագույն տոկոս: Ի՞նչ զարմանալի բան կը-
լինի, յեթե շրջակա բոլոր դպրոցներն ամառացին
պարապմունքների ընթացքում իրենց աշակեր-
տության մեջ պրոպագանդա մղեն հոգուտ այս
տեսակների, հաշվի առնելով բերքն ու յեկամու-
տը: Դժվար չե այդ անելը: Միենույն ժամանակ
պետք ե նկատի ունենալ բազմաթիվ դրդիչները
այն հողատերերի գիտակցության մեջ, վարոնց
բանջարանոցներում մշակվում են այս նոր տե-
սակները և վորոնք յենթարկվում են այս բարե-
փոխությունն իրենց տնտեսության մեջ որ-ա-
ռաջ մտցնելու ազատության: Մեր դպրոցը նման
փորձ կատարել ե ծաղիկների, պոմիդորի, ելա-
կի վերաբերմամբ և նկատել ե վոր՝ վորոշ ու-
նակությունների ու տոկունության դեպքում
գործը վատ չի գնում: Իսկ ի՞նչ կապ ունեն նը-
ման աշխատանքները կոռպերացիալի հետ: Այն՝
վոր բոլոր այս ծաղիկները, հատապտղի թփերը,
տոմատը, կաղամբը, կարտոֆելը—այս բոլորը
մանկական կոռպերատիվ-արտադրական խմբակ-
ներ կազմակերպելու միջոց են հանդիսանում և
գործող կոռպերացիալի գուղքնթաց նպաստավոր
մթնոլորտ են ստեղծում կոռպերատիվ շահերի
զարգացման համար: Իսկ կարտոֆելի կուլտու-
րայի և հաշվետվության խաչաձեռումն ավելի յե-
ռանդուն կերպով կարտահայտվի հավանակա-
նաբար:

Այս կամ այն տեղին վորոշակի վերաբերող
գյուղատնտեսական կուլտուրանների պրոպագան-
դայի գործում ըստ յերևույթին պետք ե ի նկա-
տի ունենալ հետևյալ յերեք մոմենտները. յուրա-
քանչյուր ընտանիքի, յուրաքանչյուր տնտեսու-
թյան հետ վորոշ գործնական կապեր ստեղծել,
հետևանքների հաշվառման սահմանումը, կուլ-
տուրայի ներածությունը (բերք, բանվորական
ուժի ծախսումն, տեսակի գնահատություն) և ա-
ռանձին մասնակցողներից (յերեխաներից, գե-
ռահասներից) կոռպերատիվ խմբակ կազմելը,
ամբողջ գործը հանձնելով նրան: Չորրորդ մո-
մենտն ե տեղական և շրջանային գյուղատնտե-
սական կոռպերատիվի և պետական որգանի (հո-
գաբաժին, կոմմունալ տնտեսություն) հետ գործ-
նական կապ հաստատելը, նրանցից հրահանգ
կամ փոխառություն (սերմ) ստանալու նպատա-
կով: Մոտիկ ապագայում, յերբ այս կազմակեր-
պություններն սկսեն զարգանալ, անհրաժեշտ
կըլինի տեղական լուսրաժիններում հիմնել Փոն-
դեր՝ լայն աշխացություն ցույց տալու նպատա-
կով:

3. Աշխատանք կանանց մեջ. յեթե հարց
տանք՝ ում հետ ե աշխատելու դպրոցը յերեխաների
համար առողջ ուժիմ ստեղծելու նպատակով, պա-
տասխանը շատ պարզ կըմինի. մայրերի հետ: Թէ

Քաղաքի և թե գյուղի պայմաններում յերեխանների անձիշական դաստիարակության գործում ամենամեծ մասը մոր վրա լե ծանրացած։ Մեր կողմերում (Կալուգայի նահանգի հյուսիսում մասում բացի այդ կանակներում անտեսությունը, քանի վոր տղամարդկանց աշխատունակ մասը կամ քաղաքում, գործարաններում և աշխատում կամ տանն և զբաղվում տնայնագործությամբ։ Հետևապես հաշվետարությունը ամառալին դպրոցը, մանկական «գործերը» և գյուղատնտեսական մշակույթների պրոպագանդան կախված ե պիտագորապես այն բանից, թե ինչպես կը վերաբերվեն այդ բոլորին մեր կանաք։ Յեվ յերբ մենք խոսում ենք ընտանիքների և մշտական, շաբաթական, մանր կապերի մասին տեղական տնտեսական միավորների հետ, պետք ե հասկանալ վոչ թե ընտանիքն ընդհանրապես, այլ ընտանիքի հիմնական աշխատավորներին։ Այսպես, ինչպես մենք պատկերացնում ենք աշխատանքի դպրոցի ծրագիրն իր «ուսումնասիրությամբ» և «մասնակցությամբ», չափահաս քնակչության մեջ վերաբերում և մեծ չափով կնոջը և հանդիսանում և իբրև նրա հետ տարկող աշխատանքի անուղղակի մի ձեր։ Մեր մանկավարժական ժողովները, ցուցահանդեսները, մասուներն ու տնալին գործնական ինսպիրանտները կապված են մեծ մասամբ կենցաղի փոփո-

խության հետ, վորին նեցուկ են հանդիսարում կանանց մասսաները։ Դպրոցն ստիպված ե հաշվի առնել մնահավատությունները, սովորույթները, պասերը, գյուղական նիստ ու կացի ավանդամությունները և շատ բան անհնար ե իրականացնել, յեթե կինը չի հասկանում, անտարբեր ե կամ գիմադարձություն ե ցուց տալիս։ Մի շարք թեմաներ, վոր վերաբերում են առողջության, սանիտարիային, մանկական աշխատանքին, տնարարության կարելի լե ընդունել իբրև կնոջ հետ տարվելիք աշխատանքների հանձնարարություններ։

Ի՞նչ արդյունք կարող ե ստացվել այս համառ, քրտնաջան, մասսամբ մանր, անշնորհակալ աշխատանքից, վոր առաջադրվում ե ըստ մեր ծրագրերի կանանց շարժման վերաբերմամբ։ Այս՝ վոր դպրոցը հետագա հասարակական-քաղաքական աշխատանքի համար ստեղծում ե վորոշ մըթնոլորտ, հոգեկան սկզբնական մի խթան։ Դպրոցը հանդիսանում ե պիոներ, նախաճեռնող, վորոշ հող ե նախապատրաստում, մանավանդ յերբ նըրան հաջողվի յերեխանների կյանքի կանոնավորման, ակումբների, խաղերի, զանազան իրմբակների, մասուների միջոցով դաշտային աշխատանքների յեռուն շրջանում աղատել կնոջը յերեք դիրքերում միաժամանակ տարվող աշխատանքից։

գուղատնտեսություն, ընտանիք և լերեխաների գաստիարակություն։

4. Նույն գնահատանքը մենք կարող ենք ցուց տալ առողջապահական և հասարակական-սանիտարական ծրագրային նյութերի մշակման նախարդող աշխատանքների վերաբերմամբ։ Հստ լերեկութին դպրոցի կողմից հասարակական աշխատանքների մոտեցումը նպատակահարմար ե այս տեսակետից (առողջապահության խնամք)։ Աս մի հարց ե, վոր սուր նշանակություն ունի մեր կյանքում։ Ինչպես և բոլոր նախորդ գեպքերում, մենք պետք ե նիշենք կենցաղային և հոգեբանական, պետական և հասարակական կազմակերպությունների հետագա աշխատանքների համար նպաստավոր մթնոլորտը պատրաստելու համար անհրաժեշտ՝ նախադրյաներ ստեղծելու անհրաժեշտությունը։ Յերեք տարվա փորձով մենք համոզվեցինք, վոր դպրոցը կարող ե այնքան յեռանգուն և համոզիչ կերպով տանել բժշկի, հիվանդանոցի, հիվանդությունների դեմ պալքարելու պրոպագանդան, վոր յերբ բժիշկը՝ ինչպես այդ հաճախ տեղի յեռնենում, ներկայումս սկըսում ե զբաղվել վոչ միայն բժշկելով, այլև նախազգուշացումներով (պրոֆիլակտիկա), սանիտարական խմբակներ կազմակերպելով, նա արդեն համակրանքի յեռնդիպում այնտեղ, ուր

առաջ միայն անտարբերություն եր նկատվում։ Վերջիվերջո մենք կըհասնենք այն մոմենտին, յերբ տեղական բժիշկը, տեղական հիվանդանոցը կամ առբաժինը դպրոցին ամբողջ տարվա առաջադրություններ կանեն և դպրոցի միջոցով իրենց ծրագրերը կիրառելու համար նրան կոժանդակեն և ուսումնական պիտույքներ (գրքեր, բրոցուրներ, պլակատներ) կըտրամադրեն։ Հարցի լավագույն դրությունը և լուծումը հենց սրանում ե կայանում։

Յենթագրում ենք, վոր մասամբ արգեն կատարված կոնկրետ աշխատանքի վրա հիմնված հեռանկարային նկատառումները բավական են, վորպեսզի մեր ծրագրային գործը միայն լուսժողկումատի իրավասության խնդիր չհամարվի։ Կազմակերպչական խնդիրը հանգում ե այն դրության, վոր ընդհանուր կուլտուրական աշխատանքին անմիջականորեն մասնակցեն այն տեխնիկական ուժերը, այն գործիչներն ու հիմնարկները, վորոնք աշխատում են մեր մեծ յերկրի շինարարության տնտեսական ասպարեզներում, աշխատանքի կազմակերպության և հասարակության առողջացման ասպարեզնում։

Պետք ե շոշափել նաև մի կարևորագույն խնդիր։ մեր ուսուցչի համապատասխան պատրաստության խնդիրն ե, մանավանդ վոր նա՛ ու-

ուցիչը, արդեն ապացուցել ե իր աշխատումակությունը, նոր ուղիները հասկանալը և նոր դպրոցին մոտենալու զգալի թարմությունը։ Պարզ ե, վոր նրա պատրաստությունը պետք ե պրակտիկ, առորյացի ուղիների վրա դնել։ Բոլոր այն խողիբներում, վորոնց հետ գործնական շփումն ունեն մեր կենսական-կոմպլեքսային թեմաները, ուսուցիչը պետք ե համապատասխան չափով զինված լինի։ Զեռարվեստի արհեստանոցը, այգեցործության պարագմունքները, բանջարաբուծություն, գյուղացու և բանվորի բյուջեն, տարրական հաշվապահությունը և անձնական փորձը պետք ե մեր ուսուցչին հաստատ վոտնելով կանգնեցնեն իրական հողի վրա։ Գործնական մի աշխատանք՝ գրագիտության ուսուցումն արդեն ուսուցչության ձեռքում ե գտնվում։ Սա նրա աշխատանքի կարևոր մասն ե, վոր ինչպես պըռՓ. Ստրումիկենն ե մատնանշել, շատ ուշատ զգալիորեն բարձրացնում ե մեր աշխատավոր բնակչության աշխատանքի արտադրողականությունը և շատ պատասխանատու բնույթ ե կրում մեր յերկրի անցման շրջանում դեպի կոռպերացիա, մեքենաներ, ռադիո, ելեկտրականություն և հողամշակման նոր ձեվեր։ Կան սակայն միամիտներ, վորոնք կարծում են, վոր նոր դպրոցը և գրագիտությունը տեխնիկական վարժությունների հետ միասին չեն համա-

պատասխանում իրար։ Սա իհարկե սխալ ե. մեզ հարկավոր ե ավելի գրագիտություն, քան առաջ։ Հարցը նրանում չե՝ պետք են արդյոք տեխնիկական ունակություններ, այլ նրանում՝ թե վհրտեղ և ինչպես գործադրել այդ ուժուկությունները։ Խողիբները միայն նրանում չե՝ պետք են արդյոք ձևական զիտելիքներ, այլ նաև նրանում—յերբ, ինչպես և վհրտեղ գործադրել այդ գիտելիքները։

Մենք ձգուում ենք պարզ, սակավապետ, բայց զգաստ և յեռանդուն կերպով աշխատող դպրոցի։ Նա մեզ պետք ե, ինչպես միանգամայն լուրջ՝ անտեսական և սոցիալական արժանիք։ Մեր պատանեկությունը պետք ե գարձնենք առողջ, ուժեղ, աշխատունակ, հիմնականորեն գրագետ, վոր հասկանա՝ ինչու համար ե մեզ անհրաժեշտ աշխատանքային կյանք կառուցել, ինչպես պետք ե ստեղծենք հիմքն այն մեծ պրոբլեմների, վոր բարձել ենք մեր ուսերին։ Մեր պատանեկության վերաբերմամբ աշխատանքային դպրոցը կըտա մեզ այս յերաշխիքները։

Մեր կարծիքով այսպես պետք ե պարզաբանել հասարակական—աշխատանքային դպրոցի ծրագրերը, վորոնք դառնում են ընդարձակ պլան աճող սերնդի 40 միլիոնանոց կազմը յերկրի գործնական կամքին լծելու համար։ Նրանք զբաղված

Են մանկական վողջ հասարակության առողջացումով. մեր պատանեկության կյանքն ու աշխատանքը նրանք կազմակերպում են այն ուղղությամբ ու պլանով, վորով առաջնորդվում ե ամբողջ յերկիրը: Այդ ծրագրերի ռեալ իրականացումը կյանքում՝ յերկար և դժվար աշխատանք է: Պետք ե համակվել այս ծրագրերով, թափանցել նրանց մեջ՝ քայլ առ քայլ դիրքեր գրավելով:

Ծրագրերի վրա գեռ մեծ աշխատանք ունի կատարելու կենդրոնը՝ հաշվի առնելով տեղերի գործունեությունը: Պետք ե ստուգել, վերահսկել, նոր կապեր ստեղծել, ավելի ոգնել, քան ըլնուել կամ հետազոտել, հոգալ նյութերի (գործիք, սերմ, քարտեզներ, տեղեկատուներ) և միջոցների (արհեստանոցներ) մասին: Այս բոլորն անհրաժեշտ ե և յեթե հաստատ պահենք՝ այդպես ել կը իմի:

Մեր առաջ աշխատանքի հսկայական ասպարեզ ե բացվել:



ՀՀ Ազգային գրադարան



NL0211549

45. 965

ԳԻՆՆ Ե 15 ԿՈՊ.

